ՀԵՆՐԻԿ
ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՎԱՏԻ
ԵՐԿՈՒՆՔ

Հենրիկ
Օհանյան

ՀԱՎԱՏԻ ԵՐԿՈՒՆՔ

(1989-1999)

Հրատարակչություն «Պրոգրես»
Մոսկվա-2010

ԻՄԱՍՏԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ

Ահա կանգնած եմ ջանքերիս դեմ և,
Եվ խուսափում եմ և ընդառաջում,
Իմ երազները թավ կանաչում են,
Պայծառանում են նաև հառաչում։

Ահա ես լուռ եմ իմ խոսքերի մեջ,
Իմ գործերի մեջ իմաստն է հնչում,
Ես մոլորվում եմ կծիկ ճամփեքին,
Հողմերն են իմ դեմ ելնում ու շաչում։

Ու որոնում եմ ուղիները ու
Հորիզոններն են հեռվում ճաճանչում,
Իմ վայրկյաններն են միայն ու միայն
Իրենց ծառային հեռվից ճանաչում։

1997թ.

ԳԱՐՈՒՆ ԵՄ ՏԵՆՉՈՒՄ

Պոկվեցի մի օր
Ժայռի ճաքճքած բեկորից,
Նետվեցի անդունդ.
Հայացքս վերև մեր օրից,
Օրս թախծոտ էր,
Երբ դարձավ կրկին արևոտ
Երազս թիթեռ,
Փրկեց ինձ թիթեռ բռնողից։

Ասես ես լուրջ եմ.
Շուրջս ծաղիկ է, ծաղկանոց.
Աչքիս արծիվը
Աչքերն ինձ հառել վերևից,
Կարծես թե՝ ի՛նչ ես
Այդտեղ՝ ներքևում թպրտում,
Թռչում եմ վերև,
Ծաղիկն է կանչում ներքևից։

Վեր ու վար անում,
Ապշած եմ թռիչքի այս ձևից,
Այս ինչ ամպեր են.
Էյ, հե՛յ, դե ցրվեք այդտեղից,
Այս ի՛նչ ցրտեր են
Տկար իմ մարմնին համակում,

Հայցում եմ գարուն
Երկիր ու երկինք ստեղծողից։

1997թ.

ՍԵՐ, ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ

Սերը ստեղծագործ սրտիս սպեղանի,
Հույսը հոգեբան հոգուս հոգատար,
Հավատը, հաստատ հացատու հարցի,
Սուրբ երրորդություն սրբին սրբարար
Սրբասիրտ կյանքի։

Բայց թերհավատ է հոգիս հոգեկեզ,
Բայց սերը դուռն է բախում իմ սրտի,
Հույսն էլ հուսով է՝ կուտի հնդընկույզ
Ու կնորոգի ներքնարմատները
Նրբաղոտ կյանքի։

Նախագծում է կամքս նախահոգ՝
Իր հետ քարշելով շունչը հավատի,
Թիկունքին սերն է իր համար անհոգ
Երգախառնակում սրտալարերը
Խստապահ կյանքի։

Թևանցում մեկեն հանդարտ ընթացքով,
Խոսքի գործերն են վերաճում հոսքի,
Զբոսաշրջիկիս ուղեկցում սիրով
Հաճոյատեսիլ բուրաստանները
Համընթաց կյանքի։

1997թ.

ԶԱՐԹՈՆՔ

Նավակը ծովում հանդարտ օրորվում,
-Ո՛չ, ամպն է լողում կապույտի վրա,
Տե՛ս, ճերմակ ձյունը իջել է ծառին,
-Ո՛չ, աղավնին է իր թառի վրա,
Բողբոջը պայթում, ծաղիկը բացվում,
Տերևն է ճյուղին զվարթ կանաչում,
Գարուն ողջունող փչակում նրա
Ծնված ծիծեռն է մորը ճանաչում:

1997թ.

ՉԵԶՈՔ ԳՈՏՈՒՄ

Հոգուս կանաչ դաշտերում
Ծաղիկներ են օրորվում,
Մթնաթաթախ անդունդում
Մեղքն է ուռկան ինձ նետում:
«Բավականն» է խիստ նեղվում՝
Չեզոք գոտում մոլորված,
Մեկ ծաղկանց նիստ հրավիրում,
Մեկ՝ ժողովում դժկամած.
Ու՞մ բողոքեմ, ծնողի՞ս,
Թե՞ թշնամուս «անտեղյակ»,
Չէ՛, չեմ կարգի բողոքին
Քավարանիս մեծ խոսնակ:

1997թ.

ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

Անել մի դիրք մթասույզ,
Լուսաշավիղ թախծապատ,
Անձիրք մի դեր լուծարվող,
Երկարաձիգ հույսի քող,
Անհայտ ուղի անժպիտ,
Հայացք հեռուն՝ այն անդին,
Ու խորհուրդներ լիառատ,
Որոնումներ պետք–անպետք,
Խճճված խոհ մի մատուռ,
Տարածք-ժամի դաշտերում
Թափառում եմ ես անտուն։

1997թ.

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

Աշխարհի նյութեղեն վարքից,
Գործերից նրա փոքրաչափ
Կախվեցի բնության փեշերից,
Մտա իր գիրկը արևշատ։

Անտառի դյութական խորքերում
Խաղաղ օդ, այնտեղ զուլալ ջուր,
Ապրում էր թավշապատ թփերում
Անդորրը այն դյութիչ, բնատուր։

Անձրևն էլ մաղթում էր մաղթանքներ,
Փրկանքն էր որոնում ճնշվածիս,
Ես էլ՝ ձեռքերս դեպի վեր,
Դերն էի տանում փրկվածի։

1997թ.

ԽԱՂԱԼԻՔ

Նյութեղեն լացող մի վիճակ
անարցունք,
Անարցունք մի ծով մրրկած,
անարդյունք,
Լեռնացած ալիքներ,
Մի տապան՝
ապաստան,
Փրկարար մի կղզի պատկերվող
հեռաստան,
Քրքրող, քարկոծող ու լափող
փոթորիկ,
Ամպեամպ շպրտվող, փշրվող,
Օրորվող մի նավակ՝
Խաղալիք:

1997թ.

ԻՄԱՍՏԱԽՈՍ ՔԱՄԻ

Կակաչագույն նռան ցոլքը իր դեմքին,
Շողակնափայլ աստղաչքերով ողջույնի,
Նա՞ է արդյոք իմ երազած թագուհին,
Որը անցավ, թողեց ինձ միտք արթմնի։

Սառը քամին շոյեց միտքս կնճռապատ,
Թե՝ մի՛ փխրիր դու քո հույսը հնարմատ,
Չի չորանա նա անցողիկ երաշտից,
Պիտի հառնի դեպ բարձունքը անարատ։

Այնտեղ, որտեղ չկա ժամ ու փորձություն,
Որտեղ կյանքը չի վերջանում ծնվելով,
Որտեղ մեկը թեկուզ պատրանք, փրկություն,
Ուղեկցում է ինքը իրեն փնտրելով։

1997թ.

ՇՓՈԹ ՀՈՒՅՍԵՐ

Մի անհանգիստ մտորում,
Վերից կախված բախտ մի կեռ,
Ափսոսանքի դիզված կույտ,
Մի չոր հայացք դեպի վեր։

Մառախուղված անթև սեր,
Կարկամած հույս անհայտում,
Վարագուրված բարկ լույսեր,
Պատմություն են ու պատում։

1997թ.

ԻՆՔՆԱՄՈՌԱՑ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Լռության զարշ ճահճախորքում
Ցնորքի դեմ դեղ որոնող,
Մերկությունը ծածկող խղճի
Պատրանքներում մի բնակվող՝
Խորտակվողի փեշից կախված
Օգնականին՝ ինձ՝ անճարիս
Թե՝ կմեկնի ձեռք իմ հալին,
Թե՝ դու դարձիր մի լավատես
Նայվող, այրվող աղջկա պես,
Պատուհանից հեքիաթների
Թե՝ մի ասպետ հրես պիտի...
Օ՜, խնձորն էլ դեռ չի ընկնում
Ինձ՝ պատմողիս,
Որ վերջացնեմ խոսքս բարով,
Որ երկրանամ քանի՜ տարով,
Որ մեկնեմ ձեռք իրոք մտքին,
Որ ես հասնեմ
Իմ առաջվա խոհեմ դիրքին։

1997թ.

ԱՅՆՏԵՂ ԷԼ ՅՈՒՐՏ Է

Կորած այս ժամի զգայարանները
Չեն նշագծում որոնումներս
Դեպի ժամանակ ու տարածություն,
Դեպի հավերժը, դեպի հայտնություն։
Անդորրագիր էլ չունեմ, որ պարզեմ,
Ասեմ՝ մուծել եմ, իրավունք ունեմ,
Պիտի հաշվարկեմ չափը տիեզերքի,
Իմ ժանգուժունված ձիրքս ու՞ր տանեմ։
Անդորրաշունչն էլ դատարկն է լցնում,
Որ իմ ընթացքը տեսնեմ անարգել,
Ընկնեմ նեղ ուղին անցյալ խորքերի,
Ելնեմ գալիքի ճյուղերից կախվեմ.
Քաղեմ մրգերը ու բերքը բերեմ,
Բերեմ այս անկուշտ ներկա-հրեշին...
Բայց դե սպասեք,
Պայծառատեսի հագուստը վրաս
Լայն է ավելի,
Է՛հ, իջնեմ վերից,
Այնտեղ էլ ցուրտ է։

1997թ.

ՍԻՐՈ ՄԵՂԵԴԻ

ՍԻՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Արևհարվեցին մի օր աչքերս,
Ու ջերմահարվեց մի օր իմ հոգին,
Մի օր մոռացա, թե ի՞նչ գույնի է
Երեկվա գնած շորը իմ հագին։

Չնկատեցի, թե ինչպես ուսով
Խփեցի իմ մոտ հայտնված անցորդին,
Թե ինչպես ընկա հարթակ-փողոցում
Ինչու նայեցի թեք, թեք վարորդին։

Ծանոթ պատկեր է, կգա ու կանցնի
Արևահար ես դարձել, ասացին,
Ծանոթ պատկերը եկավ ու անցավ,
Ու ես սպասում եմ արևածագին։

1997թ.

***

Բացվել է սերը իմ հոգում այսօր,
Ինչպես գարունն է բացվում դաշտերում,
Ծաղկեփնջեր եմ պատրաստում կրկին
Իմ սիրաշաղախ ծաղկած հովտերում։

Խփում է նորեն մի ծանոթ զգացում
Խփում է հոգուս հուզված լարերին,
Կրկին երազն է ճախրում երկնքում,
Սիրո հրեշտակն է թևածում կրկին։

Բացվել է սերը իմ հոգում այսօր,
Ինչպես գարունն է բացվում դաշտերում,
Ծաղկեփնջեր եմ պատրաստում կրկին,
Իմ սիրահարված կանաչ հովտերում։

1997թ.

ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿ

Ահա՝ բացվեցիր իմ արքունիքում,
Իմ ապարանքում ճոխ արկածային,
Ես հիանում եմ չքնաղ քո տեսքով
Տեսքով հմայուն առեղծվածային։

-Օ՛, ես չեմ բացի աչքերը իմ փակ,
Որ դու հաստատվես իմ սիրո գահին,
Որ դու չվառվես, որ դու չհալվես
Այրվող աչքերս բացվելու պահին։

Որ չփշրվի կառուցվածքը քո,
Լուսե մարմինդ ջինջ, հեքիաթային
Որ չանեանաս, որ չանհետանաս,
Սիրո իմ արվեստ հրեշտակ երկնային։

1997թ.

ՍԻՐԱԾՈՂ ԿԻՐՔ

Արևը շողում ամպերի վրա,
Անձրև է մաղում ծաղկած դաշտերին,
Փայլում է ցողը հեքիաթ պարտեզում,
Ցոլաշողում է իմ երազներին։

Խաղում է կայծը գունախաղի հետ,
Հոգուս կրակը սիրավառության,
Թրթիռն է կախվում հաճության թելից,
Տրվում է ճոճքին սիրահարության։

Արևը նստած ամպերի վրա,
Ոսկե անձրև է շաղում մարգերին,
Վառվում է մի կիրք պարտեզում սիրո,
Սիրաժպտում է իմ երազներին։

1997թ.

ՊԱՏՐԱՆՔ

Նա քնքուշ է ու անուշ,
Իմ ծաղկաշատ աշխարհում,
Աչքս աչքին սիրահար,
Իր երազն է նշմարում։

Ինձ պատում է մի հեքիաթ,
Պլատոնային սուրբ սիրով,
Վառած մոմի տակ նստած,
Փոխադարձ ջերմ հայացքով։

Ու վարդագույն վառ գինով,
Կենաց խոսքից անշշուկ,
Կապույտ երազ աշխարհում,
Իջավ սերը մեր փափուկ։

1997թ.

ՏԵՐԵՎԱԹԱՓ

Տերևը պարեց
Իր մեղեդու տակ,
Հարբած նա ընկավ
Քո նրբին ուսին,
Թեքվեցիր դեպ ինձ
Հայցող աչքերով
Հասկացանք իրար,
Ժպտով միասին,
Ու հանգիստ իջավ
Թևս քո ուսին։

1997թ.

ՍԻՐՈ ՆՎԱԳ

Նվա՛գն է հնչում առաջին սիրո,
Իմ հոգու հեռու ծաղկածուփ նորքից,
Պարազգեստի մեջ մի հեքիաթային,
Հայտնվում ես դու հուշերի խորքից։

Պարում ենք, ահա պարը մեր սիրո,
Ծնված առաջին անփորձ պտույտից,
Նայում ենք իրար քաղցած աչքերով,
Կորցնում ենք իրար գլխապտույտից։

Չէ, չէ մի կտրեք նվագն իմ հոգում,
Մի՛ խլեք սիրո նվերն իմ անգին,
Ընդառաջում է իմ սերը ահա,
Ես պատրաստվում եմ պարելու կրկին։

1997թ.

ՄԵՐԺՎԱԾ ԵՐԱԶ

ԿՍԿԻԾ

Ասա՛, այդ ինչու՞ դու ինձ մերժեցիր,
Իմ երազները դու խորտակեցիր,
Ու մենք զրկվեցինք իրար նայելուց,
Իրար սիրելուց, իրար փարվելուց.
Անհամբեր սպասող ժամադրավայրից,
Գիշերվա սիրո լուսնոտ քնարից
Ծաղկեփնջերից գարնան բուրավետ
Հասած համբույրից աշնան քաղցրավետ,
Ու քնքշալից նուրբ սիրախաղից,
Արևամուտի անձրևաշաղից,
Անձրևանոցի տակ ծածկվելուց,
Իրար գրկելուց, իրար փայելուց,
Ու դրա դիմաց ձեռք բերեցի ցավ,
Թախիծը պատեց ու անհետացավ,
Թողեց նա մի հուշ, կսկիծ մորմոքուն,
Ու տվայտանքներ, խորհուրդներ անքուն
Եվ կորավ հավատ բարու քնարի,
Եվ սիրո հանդեպ նաև աշխարհի
Իմ երազները դու խորտակեցիր
–Ափսո՛ս, ա՛խ ափսո՛ս, որ ինձ մերժեցիր։

1997թ.

ԵՐԱՆԻ

Ա՛խ, թե երանի ինձ հետ լինեիր,
Փնտրեի աստղ քեզ հետ միասին,
Լուսնի շողի տակ գունեղ ծովափին
Մինչ լույս քայլեի քեզ հետ միասին։

Քեզ հետ միասին շրջեի աշխարհ,
Հեքիաթանայի քեզ հետ միասին,
Իմ երազները կիսեի քեզ հետ,
Սիրահարվեի քեզ հետ միասին։

Երանի այստեղ ինձ մոտ լինեիր,
Կազմեի երգի փնջեր քո մասին,
Ա՛խ, թե երանի ինձ հետ լինեիր,
Երջանկանայի քեզ հետ միասին։

1997թ.

Չ՛Է ԻՆՉ ԷԼ ԱՆԵՄ...

Նայում եմ երկար,
Ես իմ անցյալին
Կարծես թե ոչինչ,
Ոչինչ չեմ տեսնում։
Նայում եմ երկար
Ես քո պատկերին
Կարծես թե ոչինչ,
Ոչինչ չեմ հիշում։
Ես մոտենում եմ
Մեր նուրբ կոնյակին,
Անցած օրերը
Հեռու եմ քշում,
Չ՛է ինչ էլ անեմ
Անեմ, թե չանեմ
Իմ անցած սիրո
Օրերն եմ նշում։

1997թ.

ՓՇՐՎԱԾ ԵՐԱԶ

Կար մի նորություն,
Նորին մեծություն,
Գավաթում կարմիր
Սիրավառություն։

Թափվեց, ա՛խ, թափվեց
Դարձավ փորձություն,
Երազս դարձավ
Հուսախաբություն։

Մնաց մի անցած
Սիրո պատմություն,
Ու մի անկատար
Խոստովանություն։

1997թ.

ՎԻՐԱՎՈՐ ԹԵՎՈՎ

Ես էլ հոգով թռչունի պես,
Ճախրում եմ վե՛ր, դեպի վեր,
Սակայն սերը իմ թևածող,
Համարեցին անվավեր։

Կրակեցին իմ թռչունին
Որսորդները ահավոր,
Նա թռչում է ցավոտ սրտով,
Խոցված թևով վիրավոր։

1997թ.

* * *

Մթության խորքում
չղջիկ մտքեր են,
խճուճ հետքեր են.

Սուր ծղրտացող
փայլուն հույսեր են,
զվարճ լույսեր են,

Բացվող կոպերին
թառած հարցեր են,
անթիվ բայց-եր են,

Դեպի վեր նայող

Կապույտ շղարշին
ճերմակ հավքեր են՝
հեռուն սլացող ու
փոշիացող։

1997թ.

* * *

Անհայտության մեջ
փախչող օրեր են՝
անհոգ գլորվող,
լուռ անէացող
ու անհետացող։
Դեպի ափ ձգտող,
լողացող դարեր
անվերջության մեջ
անչափ հուսացող,
հուշարձանացվող։
Ձմեռվա կեսին
անտուն խոսքեր են,
անճար մտքեր են՝
քամու պես անցնող
ու հավերժացող։

***

Երջանկության իմ թռչունը
Դեռ թռչում է երազում,
Երազում է հյուսել բույնը,
Արկածային իր կղզում։

1997թ.

ՄԻՐՈ ԱՐԵՎ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅԹԵՐԻՆ

Ես քայլում եմ տերևածածկ
Նեղ փողոցով Աբովյանի,
Շուրջս կարմիր ու դեղին է,
Ոսկե աշուն Երևանի։

Մեղմիկ նայում քաղցրանում են,
Աղջիկները մեր ծիրանի
Հասած սիրուց նուրբ կլիսվում են,
Ծառերի տակ Երևանի։

Մի սիրուհի եկավ անցավ,
Նայեց աչքով աննմանի,
Իմ մեջ սրտի կտոր թողեց
Սիրո մայթին Երևանի։

Ես քայլում եմ սիրաթախանձ,
Նեղ փողոցով Աբովյանի,
Ինձ ժպտում է լույսը անքուն
Երեկոյան Երևանի։

1997թ.

Ա՛Խ, ԼԻՆԵԻ, ԼԻՆԵԻ

Ամպերի տակ ոտնատակ
Թռչող արծիվ լինեի,
Մանուշակե երկնքից
Մի փունջ ես քեզ բերեի։

Քեզ գրկեի, տանեի
Բույնս՝ սարի գագաթին,
Քարանձավում մթնամութ
Սպասեիր իմ դարձին։

Ու նայեիր վերևից,
Չորս կողմ կիրճեր ու անդունդ,
Ձրուցեիր թախծանուշ
Ամպերի հետ գնդեգունդ։

Ճանկերիս մեջ իջնեիր
Քո հայրական կտուրին,
Ու կարոտդ առնեիր,
Ու նետվեիր ինձ կրկին։

Սավառնեինք միասին
Սարեր, ձորեր, անտառներ
Ու տեսնեիր փոթորիկ,
Ու անցնեինք օվկիաններ։

Կերակրեի լուսնաշողք
Քեզ ոսկեգույն քարափին,

Լողացնեի ոսկեշող
Արծաթ-փրփուր ծովափին։

Կրկին բույնս բերեի,
Խոտ խոսքաշատ իմ բնում
Դու մոռացած ամեն ինչ՝
Ասեիր՝ քեզ եմ ...:

1998թ.

ՍԻՐՈ ԱՐԵՎ

Եվ ահա կրկին իրար դեմ դիմաց.
Մեր կիսատ թողած խոսքը ցրտահար
Կարոտից կծկված անմեղ հայացքով
Ու հնչեցնում է հին արկածների
Կրկին հուզմունքն է լցվում սրտի մեջ.
Լուսավորում է հոգիները զուսպ
Դառնում հոգեղեն մտքի խորհուրդը,
Ու մարմնեղենն է դառնում իրական,
Թևավորում է կապույտ երազի
Ու թևածում է լուռ սիրավեպը,
Հորիզոններում պահ մտած ուղու
Որ իրիկնային խորհուրդը պատող
Քնքշանքի նաև, նաև թովչանքի,
Եվ ահա մենք ենք մեր դերերի մեջ
Այնտեղ սպասում է արևը սիրո

Դուրսը ձմեռ է.
մոմի լույսի տակ
սիրախաղում է
նվագը սիրո,
ու թրթռում է,
ճրագը հուսո,
անեղծ սրտերի,
կենդանացնում է,
կիրքը թառամած,
որպեսզի տրվի
երազ մուրազին,
վերածվի լույսի,
անմար արևի .
մի տեղ ուայնտեղ,
դրսի ու ներսի:

1998թ.

***

Թափվեց կարմիրը կապույտի վրա,
Դարձավ արշալույս իմ աչքին նախշուն,
Ընկավ դեղինը կանաչի վրա
Ու կոչվեց աշուն։

***

Կրկին կապեց ծիածան,
Գուներանգով իր ընտիր,
Կրկին նստեց իր գահին,
Երկրագունդը թագակիր։

***

Երկինքը իջավ մամռոտ քարափին,
Արձակեց ծիլեր ժայռին հողանդակ,
Հանեց գլուխը անձրևից թրջված,
Մի երկնանվեր, անմեղ մանուշակ։

1998թ.

***

Բողբոջը բացվում,
Ծաղիկ է պատվաստում,
Ամպը երկնքում
Կարկուտ է պատրաստում:

***

Մի փարթամ ծառ ու մեն միակ,
Մի մեծ խնձոր իր թառին,
Երազում է նա հիրավի,
Տիրել կողքի անտառին:

***

Ազատությունը, կապույտ է ինչպես,
Ինչպես երկինքը օվկիանի վրա,
Խաղաղությունը, ճերմակ է այնպես,
Ինչպես աղավնին կապույտի վրա:

1998թ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՉ

***

Ես մեր հայոց լեռնաշխարհի,
Սառնաղբյուրի ջուրն եմ սիրում,
Սարին արված խորովածն ու
Առավոտյան խաշն եմ սիրում,
Իր լավաշը, տոլմա ճաշը,
Իր բաստուրման եմ ես սիրում,
Կոնյակ, գինի, Ջերմուկ, Իշխան
Մեր խոհանոցն եմ ես սիրում:

***

Այս պղտոր կյանքում աշխարհասասան,
Անաղոտ հոգուն մեղքն է հակասում,
Սարերում ծնված լեռնական սրտին
Մաքուր օդ, զուլալ ջուրն է պակասում:

1998թ.

***

Արշալույսի հետ բացվում է
Մասիս սարը, ա՛խ երանի...
Երազում եմ աչքով անկուշտ
Կարոտ աչքով, ա՛խ երանի:

***

Հուր է թափում արևն ամռան
Կառույցներին մեր գեղանի,
Փայլփլում են զգեստները
Գեղաճաշակ Երևանի:

***

Կոտրեց ծարավը իմ սրտի,
Սառը ջուրը պուլպուլակի,
Հիանում եմ կարմրատուփ
Քանդակներով հրապարակի:

1998թ.

***

Եկեք աշխարհին
Նայենք դեպի վեր,
Փնտրենք երկիրը
Ճամփով դեպի վեր,
Որ սերունդներին
Մեր խոսքը բերենք,
Մեր երգը բերենք,
Մեր բերքը բերենք,
Ձմեռվա բաժին
Մեր փայտը կտրենք,
Վառարանի մոտ
Հեքիաթներ պատմենք։

1998թ.

ՔՆԱՐԵՐԳ

ՈՐՈՆՈՒՄ

Թռչունների արքան ժպտաց վերևից,
Երբ որ նկատեց փորձն իմ թռիչքի,
Փոթորիկ ծովը թքեց երեսիս,
Երբ փորձում էի հասնել ձկներին։

Դե աստղերն էլ ինձ հայացքով սաստող
Ասացին՝ մարդ ես, գնա քո ճամփեն,
Փառքն էլ երբեմն հրաման տալով՝
Ասում է՝ մնա սահմանում չափիդ։

Հո՛ղ իմ բարեբեր, դու ես հորինել
Ու դեռ մնում ես հենարան որպես,
Որպես պահապան ծով ու երկնքի։

1995թ.

ԱՐԵՎԱՇԱՂ

Նկարում եմ ես երկինքը բացված,
Ու կռունկներն են թևածում գրչիս,
Զարդարված լեռը սպասում է ինձ՝
Շունչ տալու կտավ-բնապատկերիս։

Կանաչ խոտերս քնար աշխարհում
Օրորվում են թույլ քամուցը շոյող,
Ցածրում առվակն է կչկչում ուրախ,
Թափվում անդունդը իմ երազների։

Հաստաբուն ծառի փարթամ շվաքում
Ոչխարն է այրող տապից նվաղում,
Ու ծլվլոցը գույն-գույն հավքերի
Կտավիս հրճվող արև է մաղթում։

Ժայռածերպի այն փոքրիկ տնակը
Գոռոզ կեցվածքով նայում է վերից,
Խլում է ամբողջ երկրի հմայքը՝
Վերադարձնելով պարգևը նորից։

Արև է վառվում ծայրում կտավի,
Մյուս բևեռում անձրև է գալիս,
Գառան մայունն էլ իր քաղցր ձայնով
Ուզում է շունչ տալ անշարժ դրախտին։
1995թ.

ՇՈՂԵ ԹՌՉՈՒՆ

Այրող տոթի տաք վառքում,
Կանաչ թևերը փռած,
Թևերի տակ՝ շվաքում,
Կյանքն է եռում շիկացած։

Հողը շնչում խոնավ բույր
Իր կողակից ծառերից,
Չորսկողմ գունեղ հրապույր,
Չորսկողմ ձայներ գաղտնալից։

Սիրամարգը պճնազարդ
Վախից պոչը հավաքում,
Ծլվլոցից ծտերի
Հապճեպ մի կողմ է քաշվում։

Դարձավ ժամը ակնթարթ,
Արևն անցավ սարերը,
Կռնչաց բուն ահալի,
Հավքերն անցան բները։

Կամաց իջնում է կարմիր
Մայրամուտը անտառին,
Եվ հավքերը անհաշիվ
Հանգիստ նիրհում են թառին։

Միայն շողե մի թռչուն,
Մի հեքիաթ է թափառում,
Թափառում է մի երազ
Մթնակապույտ անտառում..

1996թ.

ԼՈՒՄՆՅԱԿՆ ԻՄ ՀՅՈՒՐՆ Է

ԱՆՍՓՈՓ ՀԱՅԱՑՔ

Լուսինն արծաթե շողերն է նետում
Խռոված դեմքին երկիր-եզերքի,
Գիշերվա խորհուրդն է աչքով սևեռուն
Սրբություն-մեղքի երկընտրանքի դեմ։

Ու իր հայացքով անբիծ, կուսական
Կարեկցում նրան՝ իր կորուսյալին,
Ու ճիգն սփոփող, անկարող, սակայն,
Պատրանքն է դառնում տապալվող երկրի։

Լուսինն արծաթե շողերն է նետում,
Ողջույն է հղում մի սրտաճմլիկ,
Գիշերվա կողպած խորհուրդն է բերում
Դռներով չարյաց ու մեծ հավերժի։

1995թ.

ԼԻԱԼՈՒՍԻՆ

Լուսինը՝ շիկնած օրիորդի տեսքով,
Աչքով է անում՝ ժպիտը դեմքին,
Խեցգետինները ծովափին ցնծում,
Կյանքով է լցվում իրենց նուրբ հոգին։

Գիշերային մութ խավարը ագռող
Երկնի գաղտնիքով հոգի է պատում,
Գիշերվա ամպից լուսինը ելնում,
Իմ երազներին շողեր է նետում։

Լուսին ու խավար՝ ձեռք ձեռքի տված,
Մտորում են դեռ ճախրել անքնին,
Իմ երազները շաղախել ցրված,
Կորած աստղային համակարգերին։

Ու գիշերային դաշինքը խորին
Ձգում է ինձ վեր, նետում տիեզերքին,
Պտտում անվերջ արագությամբ մեծ՝
Վերադարձնելով փափուկ իմ բարձին։

Լուսինը թախծոտ օրիորդի դեմքով
Օրորում է վառ հուշերս անքուն,
Երազ ժպիտն է իմ սրտում փայլում,
Լիալուսին է իմ խորքում անհուն։

1996թ.

ԳԱՐՈՒՆ Է ԿՐԿԻՆ

Զարդագործվել է գարունը կրկին,
Համատարր բույրն է համեմվում օդում,
Երկինքն է ցրել ամպերն անքնին,
Արյունն է եռում երկրի խորքերում։

Ցանկության տենչը գարնան թովչանքի
Խաղաղություն է իր մեջ սերմանում՝
Տանելով դերը պայծառատեսի՝
Գործին լծվել է մեզնից պահանջում։

Կյանքի է կոչում հողը արգավանդ,
Շեփորն է հնչում հոգու դաշտերում,
Կրկին պայքար է, ապրելու եռանդ,
Եռում է կյանքը մարդկանց սրտերում։

1996թ.

ԵՍ ՈՒ ԱՐԵՎԸ

Մենք, իրար գրկած, իրարով տարված,
Մեր ուժն ու միտքը մեկմեկու փարված,
Միմյանց ջերմությամբ անվերջ հմայվող
Հարազատներ ենք մենք՝
Հարազատներ։
Քնքուշ, մեղրահամ մեր համբույրներից
Սիրո ցնծության երգեր են ծնվում.
Մեր համաձուլման ֆանտաստիկ լույսով
Գարունը սոված արտերն է ցանում։
Մեր պինդ դաշինքով՝ հերկված դաշտերից
Հաց ենք ստանում հողից ու քարից,
Հրճվանքի դողից արարող ձեռքի
Ծիլ, ծաղիկ ու ծառ հասակ են առնում։
Մենք շունչ ենք տալիս կապույտ երկնքին,
Լեռներին, ծովին, օվկիանին նաև,
Մենք տալիս ենք ուժ աշխատող բազկին,
Աշխատող մտքին,
Ու մեր շողերով ձեռք ձեռքի տված՝
Մենք սեր ենք բերում
Մարդուն, կենդանուն, ծառին ու ծաղկին։
Մենք ծարավ երկրի ճաքած շուրթերն ենք
Ցողում մեզանով, հույս տալիս էլի,
Հագեցած շռայլ մեր գգվանքներից
Քաղցրահամվում է բերքը ավելի։
Ողջույն քեզ, արև՛,– ասում եմ նրան,
Հովանավորող դրոշն ես փայլուն,

Այսօր ես քեզնով սերմեր եմ ցանում,
Ու փարվում ենք մենք մի նոր բերկրանքով:

1992թ.

ՆԱՐՑԻՍ

Քրտինքի կաթիլն ընկավ ջրի մեջ,
Ու արտացոլքս ցողեց արցունքներ,
Նայում էր նա ինձ հոգնած հայացքով,
Թափանցում մինչև խորքս շնչահեղձ։

Ծարավ ափերով ջուրը առնելով՝
Շփեցի դեմքիս, ու իր զգվանքով
Սիրտս իր սառը համով զովացավ,
Ինքնին հրճվում էր հայացքն իմ պայծառ։

Զուլալվում էին աչքերս շաղված՝
Անվերջ դիտելով փայլը անձկագին,
Ու երկուստեք էլ շփումն էր հրճվանք՝
Դարձած պոռթկումը անաղարտ կյանքի։

1992թ.

ԻՆՁՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

ԻՆՁՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Ես լսում եմ,
Իմ ականջին՝
Բնությունից ինձ պարգեված
Երազանքիս ձայնը դժկամ,
Շշշուկ՝ բողոքն ընդդեմ անձիս։

Ես տեսնում եմ նյութի միջով
Լույսի, մութի միջնորդ դարձած,
Այս աչքերիս արտացոլված
Հոգնությունը ծիածանի։

Ես զգում եմ ինձնից այն կողմ
Ճոճքը մարմնիս,
Խոհս՝ ձուլված
Անշարժությանն առեղծվածի։

Ուզում մեկեն գերությունից
Նետվել գիրկը բնության,
Թողնել իրեն ու փախչել,
Փրկվել ամեն-ամենից։

1992թ.

ԿՅԱՆՔՈՒՄ ՄԵԿ ԱՆԳԱՄ

Քաղցրիկ ու շոյող մեղեդին այս նուրբ,
Որ արթնացնում է թմրած վերհուշը
Իմ վառ անցյալի,
Տանում-հասցնում
Դեպ հրաշագործ մանկությունս վառ՝
Այն ծուփ օրերի,
Որ պանիր-հացի քաղցից կշտացած՝
Մենք ընկնում էինք հանդեր ու ձորեր՝
Ճաշակելու այն հրճվանքը անգին,
Որը տրվում է կյանքում մեկ անգամ:

Այո՛, մեկ անգամ
Հենց այս քաղցրաձայն
Մեղեդին անգամ:

1992թ.

ՄՏԱՊԱՏԿԵՐ

Մղձավանջը սև, որ ինձ նետել էր
Մթին խորքերը մեր անտառների,
Խառնեց գույները.
Եվ պատկերվում էր անտառը կարմիր,
Արևն իր այրող ջրվեժն էր ցանում,
Իսկ իմ լճակը,
Փոքրիկ լճակը դեղին էր հագել։
Ու երբ բացեցի աչքերս հոգնած,
Նույն ցրտահարված երկինքն էր ձյունե,
Մշուշոտ լեռնե՛ր,
Դեղնամութ հագած վիթխարի ձորեր
Հառնել են իմ դեմ,
Ու ես մենավոր
Խարույկի շուրջը նստած աներա՛զ
Լուռ նիրհում էի։

1991թ.

ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Մութ է անխոով, մեռյալ լռություն,
Խավարում խեղդվող ու թպրտացող
Այս թույլ ճրագի թրթռոցներից
Գիշերվա խորհուրդն է ահա ինձ տիրում,
Նախապատրաստում տեսիլքների դեմ
Որ մեկ-մեկ ինձ դավ-հրեշ են թվում,
Ու ես՝ վանդակում մի ամբաստանյալ,
Բանտված եմ խոսքով իմ ազատաբաղձ։
Հեռացի՛ր ինձնից, դերվիշ փորձության,
Մի շոյիր օձիքն իմ տղայական,
Քեզ հետ կիսելու չունեմ ես ոչինչ,
Կտակված է ինձ ողջը անցյալից։
Ու ձեռքս կամաց անսովոր հույզից
Կամացուկ իջավ ճրագի վրա՝
Խավարի խորքից լույսը խլելու։

1992թ.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Թուլությունը որպես արգելք
Փոխեց հունը իմ երթի,
Որ տանում էր երազ կոչված
Այն հանդեսին անվկա.
Եվ պատկերով անմահության
Ինձ դատավոր նա կարգեց.
Պիտի դատեմ անձիս մեղքը,
Որ շնչում է անիմաց։
Երբ դռնբաց դատ սկսվեց,
Ես պարտություն կրեցի։
Երբ արթնացա մտքով շփոթ,
Հայտնություն էր ատյանն այդ,
Որ ծնկաչոք արեց սթափ՝
Հանելով ափ փրկության։

1992թ.

ՎԵՐՋԱԿԵՏ

Եվ տեսնում եմ ես վառ տիեզերքից իմ
Անսահմանության վերջակետն իմ այն,
Որ վերջանում է այն թույլ աստղիկով,
Որը դեռ իմը չէ:

1994թ.

ԿՅԱՆՔԻ ՊԱՅՔԱՐ

ԱԶԱՏ...

Արարածը՝ բնությունից,
Բնությունը՝ մարդուց վանվում...
Մարդը՝ մարդուց, մարդն օրենքից
Ազատություն են պահանջում։
Եվ օրենքներն էլ օրենքից
Ազատության լույս են հայցում,
Ցանկանում են լինել անդեմ,
Սլացք-թռիչք են երազում։
Ցանկանում են, որ աստղերը
Չարգելակվեն որպես սահման,
Որ դեմ դիմաց Ժամանակի
Չխոնարհվեն կարգով ներման։
Ազատությունը գոհ խնդում,
Հուշում է կույր-փնտրողներին.
–Ձեր ուզածը ինձ հասնե՞լն է,
Մի՛ ենթարկվեք գիժ կրքերին։
Ու դիմում է ձգտողներին,
Թե՝ ձեր պահանջը կրակ է,
Որ ձեր փնտրանքը ձեր մտքին
Վտանգավոր, հուժկու զարկ է։
Օ՛, մոտեցե՛ք՝ ինչքան պետք է,
Ազատակամ հոգով լցվե՛ք,
Թե արգելքներ կհանդիպեն,
Ազատամա՛րտ դուք վարեցեք։

Բայց արթնացե՛ք, երբ կտեսնեք,
Որ մարմինն է ձեր տաքանում,
Թե չէ կայրվեք, ա՛խ, դուք կայրվեք
Ազատության հուր-հնոցում։

1996թ.

ՍԵ՞Ր, ԹԵ՞ ԽԱԲԿԱՆՔ

Ծառը ծածկում աղամամերկ իշխողին,
Մտորում է խորախորհուրդ իր հոգում,
Թե երջանիկ պահ է ապրում զույգն իր մեջ,
Մի մարմնի մեջ լուծվում իրար՝ մի ծոցում։

Ու լսում է խոստումները գաղտակյաց,
Ու խորհում է՝ սե՞ր է արդյոք, թե՞ խաբկանք,
Երջանկություն է ցանկանում ծառն անչափ
Ու ափսոսում ակնթարթն այն երկընտրանք։

Եվ սրընթաց անցավ պահը, դարձավ հուշ,
Անցան օրեր, ու երևաց սիրողն այն,
Ու մոտեցավ փարթամ ծառին այն օրվա,
Որ գիշերվա վստահ վերմակ էր այնժամ։

Ու մոտեցավ մարդը՝ կացինը ձեռքին,
Ու ետ գնաց երկու ձեռքում դահիճն այն,
Կուչ եկավ նա՝ ծառը՝ դողով շնչասպառ,
Կանչեց անձայն գեղեցկուհուն հնօրյա։

1996թ.

ԿՅԱՆՔԻ ՊԱՅՔԱՐ

Անսաղարթ ծառը անհայտ հնարքով,
Անուրջ-կանաչով իրեն համակած՝
Չի ուզում հաշտվել դանդաղ մահվան հետ
Թավուտ անտառում իր պապենական։

Մոտենում եմ լուռ զգույշ քայլերով,
Դնում եմ ձեռքս հիվանդ մարմնին,
Զգում եմ շունչը հոգին ավանդող,
Ապրել է ուզում չորացած կաղնին։

Զրուցում է նա ինձ հետ հարազատ,
Պատմում անցյալը իր եղեմական,
Տեսնում եմ նրա լացը անարցունք,
Ապրելու ջանքը իր հերոսական։

Ապրել է հայցում կաղնին ծերացած,
Իր ընկերները վաղուց են ընկել,
Շուրջը դեռ ջահել շիվեր տարածված,
Դեռ հողմապտույտ փորձանք չեն տեսել։

Ապրել է ձգտում կաղնին ծերացած,
Որ հողմը չառնի մատաղ սերնդին,
Որ ինչպես արծիվ թևերը փռած՝
Տիրություն անի իր յոթը պորտին։

ՀՈՐՁԱՆՈՒՏ

Երբ բռնապետությունը դարձավ
փառավոր,
Ինտերնացիոնալը՝ շփոթ ազգերի
«Խորհուրդ-միություն»,
Առավել և ս դարձավ պաշտելի.
Չարիքն աշխարհի թափ առավ ուժգին,
Ծածկեց մշուշով հոգիներն անեղծ,
Խեղդեց կյանք փնտրող ուժը հավատի,
Կտրեց կաթիլը ամենազորի։
Հատեց սնունդը։
Ու անհագ տենդից խելագար մարդիկ
Նետվեցին գետը բազում մեղքերի,
Կնքվեցին հոգով բյուրոկրատիզմի,
Քշվեցին նրանք հորդառատ գետում
Դեպ պատրանքների օվկիանը անտես,
Օվկիանն անհատակ։

Այ'ո, այդքանը այս դարասկզբին։

Սկիզբ, որ խուժեց հոգիները մերկ,
Ցանեց նա այնտեղ
Նորանոր սերմեր բութ աթեիզմի
Ու մոլոր մարդկանց գերեց խաբկանքով,
Ստրուկը արեց տիրակալ կամքին։

Այ՛ո, այդքանը այս դարասկզբին։

Դար, որ ամբարիշտ ուրվական էր մի,
Որը փախել էր ու մի կերպ փրկվել
Բարիկադներից հեռու Փարիզի՝
Բերելով իր հետ կապանքը չարի
Բերելով իր հետ կարմիր «ԿԱՊԻՏԱԼ»,
Ձարկ Ավրորայի,
Որ բերեց իր հետ հոկտեմբեր մի «մեծ»,
Ոհմակ գայլերի՝
Խառնելով դիրքը ժողովուրդների,
Կախելով շղթան վզից ազգերի՝
Հիմնեց ոստանն իր ափին Նևայի։
Այո՛, նա հիմնեց,
Ու թողեց կտակ իր սերունդներին.
Որի գրչի տակ անպաշտպանն ընկավ,
Առույգ գյուղացին կոչվում էր «կուլակ»
Ու շպրտվում էր տայգաներն անշունչ
Հեռու Սիբիրի,
Որի ուղեղով
Դեռ դարասկզբին դրված հիմքերը
Հոշոտում էին սերմը գալիքի։

Այ՛ո, այդքանը այս դարասկզբին։

Ա՛յս, որ ծնեց թիվ երեսունյոթ
Ու մարդը դարձավ կյանքին անհաղորդ։

Ու «խորհուրդների» գետնախցերում
Տանջաքննումի կերպերից խեղված
Տառապում էին խուլ ճամբարներում
Արվեստ ու արհեստ սահմանափակված:

Ու երերացին այն բազմամիլիոն
Խաբված սրտերը՝ վախից թալկացող,
Երբ բանաստեղծի բերանը փակվեց.
Մթագնեցին անթիվ-անհաշիվ
մարդկային աչքեր,
Երբ տեսան խելառ, սև–սուգը հագին՝
Որդիներ կորցրած ողբակոծ մայրեր.
Ու ժողովուրդը դարձավ ինքնասույզ,
Ժողովուրդ՝
Տեսած տանջանք վերելքի,
Ժողովուրդ՝
Դարձած ծառան խաբկանքի,
Մատնված անփույթ լռության դատին:
Դատ, որ վարում էր
Մարդն ինքն իր մեջ
Առանց վկայի,
Որ դատավոր էր և ամբաստանյալ
Առանց պաշտպանի:

Այո, ծռմռվեց խոսքը արդարեվ,
Դողացին ձեռքերը այն բազմամիլիոն,

Որ ամուր բռնել էին մուրճն ու մանգաղը,
Կոկորդները պլիրկ՝ զիլ գոռում էին
Փա՛ռք ՍՄԿԿ-ին։

Այո՛, կնքում էին
այդ «անմահության» հետ
Փրկվելու համար՝ մեռնելու պայման,
Ու չարագործն այդ
Կլոր կնիք էր դարձել հաստատող,
Դարձել միջնորդը կյանքի ու մահվան։

Ու քայքայվում էր մարմինը մարդու
«ժողովրդավար» բեմում խեղկատակ,
Ու դավադիր էր կոչվում նա իսկույն,
Կոչվում թշնամի ժողովուրդների,
Երբ հրաժարվում էր
Համ ու խուլ, նույնիսկ կույր ձևանալուց՝
Կոմունիստական ճառերից հետո
Մարդկանց թմրեցնող իշխանավորին
Լիիրավ սրտով ծափահարելուց։

Այ'ո, այդքանն էլ այս դարակեսին։

Այն, որ այս երկրորդ սկսվող կեսին
Բերեց մի պայքար սառած սրտերի,
Կարմրադրոշ՝ կանչեց աշխարհին՝
Հե՛յ, «Պրոլետարնե՛ր, դե շուտ միացեք»,
Միացեք հիմնին հավասարության,
Միացե՛ք հանուն Երկրի փրկության։

Ու ծաղրում էին, անվանում՝ նեխած
Կապիտալիզմի արմատները խոր,
Թմբկահարում էին, թե այսինչ երկրում
Գործադուլ է, սով, ցույցեր ամենուր,
Թե մարդը մարդուն գազան է այնտեղ,
Կապիտալիստն ուտում է խեղճին,
Թե բանվորը՝ ստրուկ, ոչինչ է նա մի.
Այնինչ մեր երկրում հավասարություն,
Ամե՛նքն են ընկեր..
Ու գոռում էին՝ հետևում թողած
Պիղծ բանսարկուի գործերն իրենց սև,
Թե ինչպես կուռքին դարձրին պաշտելի,
Տմարդին՝ հերոս, հերոսին՝ գերի.
Չնկատելով՝ ինչպես, ինչպե՛ս է
Լուռ ժամանակը գործում իրենց դեմ,
Եվ ապագան էր կերտում պատնեշներ,
Որ պիտ սառեցնի ժամանակի մեջ
Անուժ ու անմիտ իդեալները
Անաստվածիզմի։
Ու քաղաքական բացիլը տխեղծ՝
Կամացուկ փտող մատերիալիզմի,
Խուժում է անտես,
Սրսկում բազում խաբված ազգերի
Իրենց ստեղծած թույնը վարակիչ
Ու «կարմիր» տենդի համաճարակով
Շղթաներ կռում։

Այ՛ո, այդքանն էլ այս դարավերջին։

Որ բերեց ահա մի նոր փորձություն.
Խեղված ազգերը դարձան անհամբեր,
Վերակառուցում բացականչելով՝
Պիրկ բռունցքները բարձրացրին վեր։
Ու համատարած զիլ դղրդում էր
Ուժգին կանչերի մի մեծ միություն։
Օ՛, Տեր իմ, Աստված,
Ուժահատ եղած թույլ մարմիններում
Որտեղի՞ց այսքան կամքը անկոտրում,
Որտեղի՞ց այսքան նորը փնտրելու,
Լույսով սնվելու մոլի ցանկություն։

Պատմության անիվն ընկած
ճանապարհի,
Գլորվելով դեպ խորքը անցյալի՝
Գնում է առաջ՝ գնալով դեպ ետ,
Հետևում թողած
Արյունով ներկված դրոշները սև,
Փողոցներ նետված ամբոխին անտեր,
Գլորվում դեպի ելքը այս դարի՝
Տանելով իր հետ փաստեր ներկայի՝
Ներկայանալու
Երազանքների պայծառ գալիքին՝
Արդեն ծերացած այն ելակետին,
Որը թվում էր սկիզբն ամենի,
Որը և դարձավ վախճանը դարի,
Ահա՝ այսքանն էլ այս դարավերջին։ 1995թ

ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Ես քայլում եմ, ոտքս օդում, ու մի պահ՝
Մրջնաբնին կլիտված անթիվ մրջյուններ,
Ու զգացի, որ ապրեցին մահվան ահ,
Ու ցանկացա ոտքս շեղել, բայց ուշ էր։

Բայց դե ուշ էր, ոտքս իջավ ուղիղ ցած,
Ու որոտաց, ցնցվեց երկինք ու երկիր,
Ու ցիրուցան եղան ողջերը գժված,
Փախչում էին՝ լուռ կանչելով՝ Տեր, փրկիր։

Ու երբ ոտքս բարձրացրի խղճահար,
Անթիվ մրջյուն զոհ էր դարձել ոսոխիս,
Անթիվ մրջյուն այրիացավ սգալից,
Նորածիններ լուռ որբացան այդ պահին։

Ու երբ երկրորդ ոտքս պոկվեց իր տեղից,
Սարսափ-խուճապը ողջերին պինդ պրկեց,
Երկրաշա՞րժ է, թե՞ դատաստան, ո՛վ գիտե,
Դե՛ փրկվեցեք, աշխարհի վերջն է եկել։

1996թ.

ՄՏՈՐՈՒՄ

Թե որ ծնվում ենք, ապրելը ցավ է,
Սնող երկիրը՝ մարդուն խաղադաշտ,
Ծնունդը՝ դարձող մահ, մահը՝ ծնունդ,
Կյանքի իմաստն էլ անհայտ մի խաղ է։

Թե որ ապրում ենք՝ մի ակնթարթ է,
Թե որ հիմա կամ, եղել եմ անշուշտ,
Ու թե կլինեմ էլի մի անհայտ
Անցյալ ու գալիք հրաշք հեքիաթ է։

Թե որոնում ենք գաղտնիքը կյանքի,
Չարը ու բարին Աստծո կամքն է հենց,
Մարդու հոգու հետ խաղացող հարցն էլ
Խոսքի ու գործի ստացված վարձն է։

Թե հույս ենք պահում, որ լավ կլինի,
Որ արդարները կապրեն առհավետ,
Անմահությունը երկրի ու երկնի
Մարդուն պահպանող երաշխիք է մի։

Ու թե սպասում ենք այդքան մեզ անհայտ
Աշխարհի վերջը կգա՞, կլինի՞,
Պարզված է ներկան, պարզ, հասկանալի,
Որ «վերջը» ահ է, թեկուզ ոչ վախճան։

1996թ.

ԿՅԱՆՔՆ ԱՅՍՕՐ

Չէ, աշխարհիկը մարդուն
Ներսից պղծող մի թույն է,
Կյանքն օրհնված, անիծված
Փտող ծառին մի բույն է,
Մարդիկ հագած դիմակներ՝
Փաթաթվում են իրարու,
Նյութն էլ բեկված վզներին
Հոգի ցնցող մի բեռ է։

Այս աշխարհում կյանքն այսօր
Փշոտ, բարձր մի լեռ է։

1996թ.

ՉԿԱ

Թե այս աշխարհի ինչ-որ մի կետում
Ապրում է թեկուզ մի մարդ սովահար,
Թե այս աշխարհի ինչ-որ մի երկրում
Ապրում է թեկուզ մի հիվանդ անճար,
Թե որ ապրում է գեթ մեկը լքված,
Մի որբ երեխա՝ բախտին ապավեն,
Նշանակում է՝ չկա այս երկրում
Այն երջանկություն կոչվածը անտեր։

1996թ.

ԹԵ ՈՐ...

Ասում են՝ ապրի՛ր կյանքով անտարբեր,
Ապրի՛ր աննկատ, եղի՛ր անհաղորդ,
Նաև անթափանց, նաև ինքնիրեն,
Տես՝ ժամանակն է դարձել խորդուբորդ:

Ասում են՝ ապրիր կյանքով անխաթար,
Մի՛ խոսիր սրտով, հոգով մի՛ լսիր,
Ու մի՛ հավատա այն խղճին հիմար,
Ո՛չ խորհուրդդ տուր, ո՛չ էլ ամոքիր:

Բայց թե չունենամ լսելու ոչինչ,
Չունենամ խնդիրք ու նաև տալիք,
Ուրեմն հանգիստ պառկեմ անկողնում,
Մատնվեմ անփույթ թմրած հուշերին:

1996թ.

ԴՈՒ ԼՍՈՒ՞Մ ԵՍ

Ո՞վ է տեսել օդում տարբեր՝
Օդերևույթ, օդապատկեր,
Պաշտպանողի ձեռքը թեթև,
Խրախույսն այդ ուսին առել։
Ո՞վ է լսել երկրագնդի
Շարժման ձայնը պտույտի մեջ,
Աչքը հառած ակնթարթին՝
Ծա՞նր է շնչում, թե՞ հարատև։
Ո՞վ է լսել կրակ ծնող,
Ցավեր քաշող ճիչն արևի,
Կամ թե ձայնը արյան հոսքի
Երակ ճեղքող խուլ առվակից։
Ո՞վ է լսել տանջող խղճին,
Ո՞վ է լսել ցնծության ճիչ,
Ո՞վ է լսել սլացքի մեջ
Ետ նայելու ձայնը նշմար։
Ու թե լսեի...

1996թ.

ՀԱՐԲԱԾ ԵՄ

Հարբած եմ անշուշտ, բայց ոչ թե գինուց,
Այլ երազանքից իմ չիրագործվող,
Հարբած եմ խոսքիս մեղանչումներից,
Անվերջ հարցերից՝ ինձնից ինձ տրվող։

Հարբած եմ, հարբած իմ հողանյութից,
Խուսանավումից ինձ հիմարացնող,
Այս պնդաճակատ համառությունից,
Խոսքիս կրակից ինձ անդրադարձող։

Ու նաև, նաև սուղ ժամանակից,
Վազքից ուղեղս պինդ կաղապարող
Տեղի-անտեղի խոստովանելուց,
Վստահությունից ակնկալ բերող։

Հարբած եմ ի շահ ձգտող իմ վարքից,
Վարձից՝ շնորհիս վերից վար նայող,
Ինձ առաջ հրող անկոտրում ուժից,
Բիրտ պոռթկումներից իմ ներսը

խախտող։
Հարբած եմ գայթող քաղցր խոսքերից,
Ամեն ողջույնից՝ հավակնոտ ու խորթ,
Ոտնատակ արվող նաև իմ խղճից,
Ամեն բարձունքից՝ անդունդը նետող։

Հարբած եմ նաև միջնորդությունից,
Ամեն բարիքից՝ չարի վերածվող,
Շրջվող՝ ինձ պարտող իմ գթությունից,
Ամեն հնարքից՝ պարզի դեմ անզոր։

Ու նաև անկոչ վրիպումներից,
Մեծամիտ վճռից ինձ նսեմացնող,
Ու թե հիմար եմ՝ հիմարացնողից,
Ու ինձ, կամ թե ես՝ բռնատիրելուց։

Ու ես, կամ թե ինձ սաստիկ խոցելուց,
Ինձ, կամ ես մեկին արհամարհելուց,
Կամ հիացմունքից՝ ես կամ ինձանով,
Ու թափանցումից քո կամ՝ իմ հոգուն։

Խորության չափից՝ իմ կամ քո խորքում,
Ու ես, կամ թե դու, կամ քեզնով ինձ հետ,
Ու կամ այլապես՝ ոչ ես, ոչ էլ դու,
Կամ թե՝ ես ու դու՝ մի գնդակի մեջ։

Ու տեսիլքներից քո պես, բայց դե ես,

Թե համոզվեցիք՝ արբեցած եմ ես,
Անշուշտ կհարբեմ արնագույն գինուց։

1995թ.

ԳԺՎԱԾՆԵՐԻՆ

Փերթ-փերթ կիտված մութ ամպերը,
Որ կայծակ են ծնում գժված՝
Ջուր տանելու չոր արտերին.
Գահավիժող ջրվեժները,
Որ անդունդն են նետվում գժված,
Որ հաճենան խոլ ծովերին,
Լեղապատառ եղնիկները,
Որ փախչում են ահից գժված,
Որ վտանգից լինեն ազատ,
Ու զույգերը, որ ցնորված
Կիպ գժվում են, որ շունչ ծնվի,
Ասում են ինձ՝ գիժ ես հաստատ։
Իսկ դե ես էլ երամներին,
Որ թռչում են ցրտից գժված,
Բարևներս եմ հղում հավքին,
Բարևներս տարեք ձեզ հետ,
Շռայլ ցրեք գժվածներին։

1996թ.

ՄԻՆՉ ԿՀԱՍԿԱՆԱՄ

Բարձրյալ միտումը մաքուր ձեռնափով
Սերմնացանում է ուղեղանյութիս,
Լիրիկ, բայց խելառ, կիսահաս մտքով
Ծլարձակում է արտում ուղեղիս։

Խնամակալն է դառնում իմ կավի,
Դառնում երգասաց՝ թեկուզ անտաղանդ,
Եղանակում է իմ գոռ խոսքերը՝
Դարձնելով միտքս ինձ անհնազանդ։

Ու ինքնահաճո հանգով սիրելի
Շոյում է միտքս, ես ինձ մոռանում,
Թեև իմ ներսում ես եմ, բայց էլի
Լեզվիս շարանին ինքն է շաղկապվում։

Մինչ կհասկանամ իմ ով լինելը,
Այդ նա է, իսկ ես՝ որոնումներում,
Մինչ կհասկանամ իր ով լինելը,
Աննկատ ձևով նա ես եմ դառնում։

1996թ.

ԵՐԿՐԻ ՅՆՈՐՔԸ

ԱՓՍՈՍ

Ափսոսում եմ ես իմ հրաշք գնդին,
Զգում եմ նրա հոգոցը անձայն,
Տեսնում եմ դեմքը՝ պատված չարքերով,
Պատված ծխախեղդ, սպանիչ թույներով,
Հղում եմ՝ ափսոս...
Ու կարեկցանք եմ հղում անբարբառ
Չարագործ մարդուց՝ պղծվող իր դեմքին.
Մարդու գործերն եմ տեսնում անարդար,
Ու հայտնում՝ ափսոս...
Ափսոսում եմ ես նրա թռիչքին,
Հազարահնար ստեղծագործումին,
Թևածող մտքին՝ ուռճացած փառքից,
Ամեն ստեղծումին՝ կյանքը վտանգող,
Ասում եմ՝ ափսոս...
Ափսոսում եմ ես ներկա-անցյալին,
Կյանքի տարիքին՝ մեղքից ծերացած,
Մեղքերով օծված լույս քաղաքների
Հրաշապատում լեռնացումներին,
Որ ընթանում են դեպի կործանում.
Անդունդի ծայրը հասած անմիտին
Հուշում եմ՝ ափսոս...
Ափսոսում եմ ես ամեն– ամենին՝
Հողին, օվկիանին, երկնքին նայում,
Ինչ-որ մարդկային մտքի ու բազկի
Քրտինքին լուծված՝ դաշինքն է ցոլում,
Ինչ-որ ֆանտաստիկ ձեռքն է արարել,

Բայց ամբաստանված՝ կարծես արվածով,
Արդարադատի ներումն է հայցում,
Հասնում է՝ ափսոս։

1996թ.

ՀԱՎԱՏԻ ԵՐԿՈՒՆՔ

Այն ո՞րն է մեղքը կտրվող ծառի,
Թունավոր օդի,
Զուլալությունը պղծվող ջրերի,
Որ մահանում են մեղքից անիմաց։
Ո՞վ է մեղսարար անօրենն այդ չար,
Որտեղի՞ց ծնվում և ու՞ր է գնում։

Մեծ ժամանակն է որպես խորագետ
Փորձել հասկանալ։ Ոգում էր փորձել
Օրենքով չափի՞, օրենքով խղճի՞,
Օրենքով Աստծո հանդեպ հավատքի՞...
Ուզում էր գուցե ասել, որ դևը
Չունի անելիք մարդկային հոգում,
Չունի անելիք մարդկանց հույսերի
Կանաչ ու փարթամ ճամփուղիներում։

Բայց մինչ երազս լույսը կելնի,
Մոլագարվում է մեղքը կորստյան,
Ու թավալվելով ոճիրների մեջ՝
Գիժ ընթանում է դեպի դուռ-ատյան։

1995թ.

ԵՐԿՐԻ ՅՆՈՐՔԸ

Ես լսում եմ քեզ, երկիր հարազատ,
Լսում եմ խորքիդ տագնապը վայուն,
Լսում եմ կանչդ հոգուս ականջով,
Բողոքիդ խոսքը՝ ճայթող մի թնդյուն։

Լսում եմ ներքուստ պարսավդ ջերմող,
Ըմբոստ պայքարիդ եռը հրաբեր,
Մարդկային մեղքից քո՝ կազմալուծվող,
Բաղձանքի ձիգը արդեն անհամբեր։

Ես ունեմ, ունեմ ասելիք մեղքիս,
Մեղք կրողներին՝ անգութ, անվարան,
Մի՛ սրբապղծեք հենարան հողի
Անարատ դեմքը՝ նուրբ, կանաչապատ։

Նա մայր է, մենք էլ՝ մանուկ իր գրկում
Ու ստանում ենք ուժ կրծքից քաղցրարար,
Դեհ չճանկռտենք դեմքը անրջուն,
Որ չկապկպի թաթերը մեր չար։

1996թ

Օ՛, ՇԱՐԺՈՒՄ, ՇԱՐԺՈՒՄ

Ընթացքնե՛ր դուք լուռ,
Անսկիզբ, անվերջ գերհզոր ուժեր,
Ու բախումների մեծ խաչմերուկներ,
Որ բերում եք մեզ՝
Ինձ ու հեռահար աստղին այս կորած՝
Բերկրանք ու հրճվանք,
Որ ճառագայթով կապում եք դուք մեզ,
Ու ձեր աստղային համակարգերն էլ
Բերում-հասցնում բջիջներին մեր,
Որ միջնորդում է մեր միտք ու հոգուն,
Ու շաղախելով կապում եք անվերջ,
Կապում եք իրար...
Օ՛ , դուք կապկպված մեծ խաչմերուկներ,
Որ ամենուր եք, հող եք, ջրածին,
Գերհզոր ձայն եք, լույս ու թթվածին,
Դուք, որ խաչվում եք մեր համակարգին
Անեզր ու անտես հզոր թելերով,
Ծնում եք մեր մեջ նոր-նոր հայտնություն,
Որոնց վրայով պետք է որ անցնեն
Չբացահայտված նորանոր սարքեր,
Ռոբոտներ, քայլող նոր մոլորակներ,
Որ պիտ հասցնեն ձեր այդ ընթացքին,
Ուժ տան ու սնեն
Չբացահայտված այնքան հին ու նոր
Խորթ գաղափարներ,
Որոնք կբերեն

Ինձ ու հեռահար աստղին այն կորած
Իրար փարվելու հրաշք մի հնարք,
Ու դեռ մեզ անհայտ
Մի նոր համակարգ։
Օ՛, շարժում, շարժում...

1992թ.

ԽԻՆԴ ՈՒ ՏԱԳՆԱՊ

Օ՛, տիրույթ ճեղքող հրթիռներ արի,
Մարդկային մտքի հզոր թռչուններ,
Դուք, որ բարձունքն եք
համարվում դարի,
Հպարտ ենք ձեզնով,
Ու տագնապն եք մեր։
Մարդկային հոգին հոգնել է արդեն
Երկիր ավերող երկրաշարժերից,
Անթիվ զոհերով ջրհեղեղներից.
Իսկ հիմա ահա ձեզնից խելահեղ,
Որ թույնով լցված միջուկն եք կրում,
Երկյուղի տենդը վախի վիրուսի,
Ցավերից տնքող այս հիվանդ երկրի։
Այո, տեսնում ենք ձեր՝ հրթիռներիդ
Սլացքը դեպ վեր,
Սլացքը հարբած,
Օ՛, դժբախտ, հարբած իմ խև հրթիռներ,
Մարդկային մտքի հզոր թռիչքներ,
Մենք՝ձեզնով հպարտ,
Մեր տագնապն եք դուք։

1992թ.

ՋՐԱՊՏՈՒՅՏ

Վերակառուցման մեր նավը այսօր
Ընկած փոթորկի գիրկը օվկիանում՝
Անվերջ պտտվում
Ու փրկություն է հայցում ամենքից։
Մեկ անղեկ, անճար ու անտեր դարձած,
Մեկ էլ ղեկի մոտ նավավար կանգնած,
Մեկ է, պտտվում, անվերջ պտտվում,
Ջարկում են նավին գժված ալիքներ,
Ճեղքված կողերից լցվում են ջրեր.
Ու մենք նավի մեջ անվերջ պտտվում,
Թվում է՝ նավն է մեր մեջ խորտակվում,
Անհետ խորտակվում
Ու փրկություն է մեզնից աղերսում.
Մենք նավի մեջ ենք,
Ու նավն է մեր մեջ,
Ա՛խ, երբ կազատվենք
Այս փոթորկալից գլխապտույտից,
Ա՛խ, երբ դուրս կգանք
Այսքան խելագար ջրապտույտից։

1992թ.

ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ

Ես երազում եմ լինել երկրագործ
Եվ ոչ թե «ուռա» մի հայրենասեր,
Ես համաձայն եմ լինել միշտ անգործ,
Եվ ոչ կամովին լինել բռնատեր։

Ես երազում եմ լինել երկրախույզ,
Ոչ թե խիստ արթուն մի սահմանապահ,
Ես չեմ ցանկանում դառնալ հետախույզ,
Սպասում եմ դատին այնքան ճշտապահ։

Ես երազում եմ, որ հայրենիքն իմ
Լինի մեր գունդը՝ միշտ կանաչապատ,
Ես ցանկանում եմ լինել միշտ խաղաղ,
Չտեսնել իմ դեմ ինչ-որ ցանկապատ։

Ես հավատում եմ, որ կգան օրեր,
Երբ չեն սահմանվի ազգ ու ազգություն,
Մոլախոտերից կմաքրի արտը,
Աստված զորեղ է, կանի մաքրություն։

Սակայն չարիքի գեհենում այս սև
Կմնամ անխոնջ հայրենանվեր,
Կսպասեմ մարդուն չարից փրկողին,
Աստված զորեղ է, կթափի մեծ սեր։

1996թ.

ԴԵՌ ԿԴԱՏՎԵՆ

Կյանքը ակտիվ, բայց ահալից ակնթարթ,
Ջեռնոց նետած ելուզակին ազարտի,
Ուխտավոր մի՝ ընկած ուղի մի անհարթ,
Խարխափում է խավարներում մեծ դատի։

Ալեկոծված օվկիաններ են դեռ փռված,
Դեռ փորձում են ընդդիմանալ գիժ մարդուն,
Դեռ երկինքն է ճիգեր անում ցնորված,
Վերջին հնարքն է պարգևում էակին։

Բնությունը ազնվադեմ իր տեսքով
Դեռ փորձում է ընդդիմանալ ամենուր,
Դեռ սրտաճաք տալիս է շունչ նա մարդուն՝
Պատասխանում՝ ստանալով թուք ու մուր։

Ու ակունքն է դեռ սպասում այս կյանքի
Աղերսանքին՝ դեռ հաղորդվող նորօրյա,
Որ հաշվարկի չափը ուղու ամայի,
Եվ որ դատվեն արարքները առօրյա։

1996թ.

ՄԻ ՊԱՀ

Կուղարկեմ մի օր ռադիոալիքով
Մի բաց ծածկագիր իմ մայր արևին,
Կխնդրեմ նրան՝ կանգ առնի մի պահ,
Չուղարկի շողեր մեր երկրագնդին։

Թող մի պահ սառչի երկիրը այս խենթ,
Թող մարդիկ կարծեն, թե եկել է վերջ,
Թող անհույս սառչեն կործանման եզրին,
Սուրբ տաքությունը փնտրեն իրար մեջ։

1996թ.

ՆՇԱՆԱԿՈՒՄ Է

Քանի որ Աստծո օրենքով, կամքով
Դեռ որոտում է ամպը երկնքում,
Քանզի արևն է հուրհրում անշեջ,
Իր տաք շողերը մեզ դեռ առաքում,
Քանզի երկիրն է պտտվում անվերջ,
Գիշեր-ցերեկը իրար են փարվում,
Քանզի չորս ծագի դերը անկոտրում,
Սեթևեթանքով, բայց կատարվում է,
Նշանակում է՝ կյանքը դեռ երկրում
Պարզաբանվում է:

1996թ.

ԱՍՎԱԾ Է ՔԱՆԶԻ

Վերահաս հարցը՝ մտքով ծարավի
Ինձ է որոնում, ինձպեսներին հում,
Ճշմարտություն է փնտրում, հիրավի,
Կավաշեն անձիս ծանոթ խորանում։

Բայց ի՛նչ ունեմ ես, մեղքս կեղծիքն է,
Մարմինս նրա հաճկատարը մեղկ.
–Ծառայիր, ստրու՛կ, ես եմ գաղտնիքը,
Ես եմ իմաստը տիեզերքովը մեկ։

Եվ տիեզերական խորհուրդն է հառնում
Բանականության ընտիր էջերում,
Ասված է այնտեղ. «Ձեր հոգու աչքով
Կյանքի իմաստը փնտրեք երկնքում»։

1996թ.

ՀԱՅԱՑՔ ԱՆՏԵՍԻ

Տեսնում եմ, Տեր իմ, գործերը քո լուռ,
Երկինք ու երկիր... ժամանակի դուռ,
Քո բարի գործը այգում եղեմի,
Բոլորած հոգին մարմինն Ադամի,
Նվերդ նրան՝ հույս, հավատ ու սեր,
Իր գլխավերև՝ անհամար լույսեր,
Նաև կողակից և իմացություն,
Պատվիրան խոսք ու ազատ ընտրություն,
Եվ բազմանալու տարածք ու հնար,
Բայց սուտը եղավ մտքին կաղապար։
Ու քանզի ստեղծված էակը անմեղ
Ասում են՝ խաբվեց այն մրգով համեղ,
Ապրեց զույգ ոգով, խոհեմ ու հպարտ,
Ապրեց գաղտնիքով, հոգով մեղապարտ։
Եվ գաղտնիքն այն է, որ իրականում
Գաղտնիքներ չկան մարդկանց մտքերում,
Եվ միտքը ինչքան հզոր, անարգել՝
Ժամանակից շուտ չի կարող խորհել։
Օ՛, ժամանակից՝ ծառա Արարչի,
Անտարիք սլացք անդեմ ամեհի
Ամեն ստեղծումի, ոչնչացումի
Մտքեր մատուցող սպասավորների
Մեծ կապավորից բարու ու չարի։

Այո ստեղծվեց կյանք,
Եվ բազմանալու տարածք ու հնար,
Բայց չափը եղավ որպես կաղապար։
Որպես գաղափար,
Որ ինչքա՜ն գաղտնիք... փորձեմ վերծանել,
Ժամանակից շուտ չեմ կարող խորհել։
Եվ մարդս որքան լոկ լավն է հայցում,
Բարի իր միտքն է Վեհին մատուցում,
Այդ նույն բարով է նորեն հատուցվում,
Այդ նույն բարով է տունը կառուցվում.
Եվ ահա հարցում՝
Թե որ ստեղծվածս որպես լուռ գաղտնիք,
Թե կորզեմ չարից օգնության կարիք,
Չասեմ՝ ոչ մեկին ես իմ անելիք
Համարեմ գաղտնիք.
Զգտեմ ես փառքի, դառնամ փառավոր,
Դառնամ չարության ուժի միավոր
Ու պարտված դիրքից հոգով ահավոր
Բախտ, ճակատագիր փնտրեմ մեղավոր,
Չե՞մ դառնա արդյոք չարյաց խաղալիք՝
Ափեափ զարկվող ինչպես մի ալիք,
Եվ որպես գաղտնիք՝
Նշանակում է նայեմ իմ օրին,
Ապրեմ բացահայտ գաղտնիքով խորին,
Ապրեմ աննկուն հավատքով անբիծ,
Ապրեմ ես բարի հոգով հուսալից։
Չտրվեմ կրքին մտքերը բանտող,
Թե չէ կխայթի օրենքը սաստող,

Ցնծամ անտեսի հերկով նորանոր,
Հղեմ Տիրոջն իմ աղոթքը հայցվոր,
Ապրեմ ու խորհեմ գաղտնիքը խորին,
Ապրեմ ու փառք տամ ինձ կյանք տվողին։

1989թ.

ԸՆԾԱՅՈՒՄ

Եվ ահա հայցն իմ Ամենազորին՝
Սաղմնավորելու հավատք իմ հոգում,
Հավատք ճշմարիտ,
Որ ոչ թե միայն հավատամ ուժին,
Իր զորությանը՝ սուրբ, արարչական,
Այլև հավատամ, որ բռնած գործս
Իր վեհ կամքով է իր սրտին հաճո.
Որ ոչ թե միայն խնդրեմ ու խնդրեմ
Հազարահնար պես-պես հանգերով,
Այլ ապավինած իր գթությանը՝
Խոնարհ ծառերից պտուղներ քաղեմ։
Ու թե կսիրեմ, իր կամքով լինի,
Թե հպարտանամ՝ իր զորությունով,
Ապրեմ զուգահեռ իր կամքի գծին՝
Իր նպատակի փեշիցը բռնած,
Ծանր հոգսերն իմ իր հետ կիսելով
Ու իմ պետքերին կարեկցողի հետ,
Ու ինձ մեղքերից ազատողի հետ,
Հուսահատվածիս խնամքով բուժող,
Հիվանդ մարմինս նորոգողի հետ։
Ու ես խնդրեցի դեպ դուռը կյանքի,
Չշտապեմ դեպի անդունդը «փառքի»,
Ստանամ բուռ պարզև բարեգործական,
Բայց բարեշնորհ, այլ ոչ թե հպարտ,
Որ զգուշանամ ներսս թափանցող

Նվազ շոյանքից՝ այնքան չարամիտ։
Ու ընդառաջեց Վեհը բարեմիտ,
Սուրբ ձեռքը մեկնեց, բայց անտեսեցի,
Պահեց, փայփայեց, բայց մոլորվեցի
Ու ինձ հասկացա, ինձ նախատեցի,
Դիմեցի կրկին, կրկին փքվեցի,
Որերորդ անգամ ես սայթաքեցի։
Ու ես խնդրում եմ, խոնարհվում կրկին,
Որ խավարները չընդառաջեն ինձ,
Որ «պահ» կոչվածը չմոլորեցնի,
Որ ապրեմ, ապրեմ
Ապրեմ մաքրության,
Ապրեմ փրկության,
Բայց ավա՛ղ, ավաղ։

1996թ.

ՆԱԽԱՆՇԱՆ

Պարտեզի մեջ անվկա՝
Չարտահայտված նոր բառեր,
Մի մերկ Ադամ ու Եվա,
Կյանքի իմաստն է բացվել:

Մթության մեջ, օ՜, փարված,
Կորցրած Եդեմը անհոգ,
Դեռ նոր մեղքից զարմացած՝
Հրեշտակներ սատարող:

Ժառանգություն բազմահոծ
Բաբելոնյան մեղքերի,
Ու մի բարձր աշտարակ,
Գալիք ցավեր սոսկալի:

Բերած փառքն է մշուշոտ
Շար-շար կայուն զորքերի,
Պատրանքներն են կսկծոտ,
Խավար՝ միջին դարերի:

Նախանշան սոդոմյան
Մեր դառնաշունչ օրերի,
Փորձություններ ահալից,
Ներկա գժված պահերի:

Տարածքները աղճատված,
Նոր-նոր գծվող սահմաններ,

Օվկիանները փոթորկած՝
Նոր փորձարկվող ատոմներ։

Անօթևան մարդկանց ծով,
Տարբեր ափեր աշխարհի,
Ու սովահար երազներ
Աննինջ հիվանդ որբերի։

Բնությունը ցավատանջ
Աչք է՝ փակված ամենով,
Դեռ գնում են աննահանջ
Երազները մեր ցնոր։

1996թ.,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՄԱՍՏԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ ----------7
ԳԱՐՈՒՆ ԵՄ ՏԵՆՉՈՒՄ----------8
ՍԵՐ, ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ ----------10
ՋԱՐԹՈՆՔ ----------11
ՉԵՋՈՔ ԳՈՏՈՒՄ ---------- ----------12
ԵՐԿՆՔԻ ՏԱԿ-- ---------- ----------13
ՓՐԿՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ ----------14
ԽԱՂԱԼԻՔ---------- ----------15
ԻՄԱՍՏԱԽՈՍ ՔԱՄԻ--------- ----------16
ՇՓՈԹ ՀՈՒՅՍԵՐ ----------17
ԻՆՔՆԱՄՈՌԱՑ
ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ----------18
ԱՅՆՏԵՂ ԷԼ ՅՈՒՐՏ Է --------- ----------19

ՍԻՐՈ ՄԵՂԵԴԻ

ՍԻՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ----------21
Բացվել է սերը...----------22
ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿ ----------23
ՍԻՐԱՇՈՂ ԿԻՐՔ----------24
ՊԱՏՐԱՆՔ ----------25
ՏԵՐԵՎԱԹԱՓ ----------26
ՍԻՐՈ ՆՎԱԳ----------27

ՄԵՐԾՎԱԾ ՍԵՐ

ԿՍԿԻԾ ----------29
ԵՐԱՆԻ ----------30
ՉԷ ԻՆՉ ԷԼ ԱՆԵՄ ----------31
ՓՇՐՎԱԾ ԵՐԱՉ ----------32
ՎԻՐԱՎՈՐ ԹԵՎՈՎ ----------33

ԱՆՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մթության խորքում... ----------34
Անհայտության մեջ... ----------35

ՍԻՐՈ ԱՐԵՎ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅԹԵՐԻՆ ----------36
ԱԽ, ԼԻՆԵԻ, ԼԻՆԵԻ ----------37
ՍԻՐՈ ԱՐԵՎ ----------39

ԿԱՊՈՒՅՏԻ ԹԵՎՈՎ

Թափվեց կարմիրը... ----------40
Բողբոջը բացվում... ----------41

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՉ

Ես մեր հայոց... ----------42
Արշալույսի հետ...----------43
Եկեք աշխարհին... ----------44

ՔՆԱՐԵՐԳ

ՈՐՈՆՈՒՄ ----------46
ԱՐԵՎԱՇԱՂ ----------47
ՇՈՂԵ ԹՌՉՈՒՆ ----------48
ԼՈՒՄՆՅԱԿՆ ԻՄ ՀՅՈՒՐՆ Է
ԱՆՍՓՈՓ ՀԱՅԱՑՔ----------50
ԼԻԱԼՈՒՍԻՆ ----------51
ԳԱՐՈՒՆ Է ԿՐԿԻՆ ----------52
ԵՍ ՈՒ ԱՐԵՎԸ ----------53
ՆԱՐՑԻՍ ----------55

ԻՆՁՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

ԻՆՁՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ----------57
ԿՅԱՆՔՈՒՄ ՄԵԿ ԱՆԳԱՄ ----------58
ՄՏԱՊԱՏԿԵՐ ----------59
ՄԵՆՈՒԹՅՈՒՆ ----------60
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ----------61
ՎԵՐՋԱԿԵՏ ----------62

ԿՅԱՆՔԻ ՊԱՅՔԱՐ

ԱՋԱՏ... ----------64
ՍԵ՞Ր, ԹԵ՞ ԽԱԲԿԱՆՔ ----------66
ԿՅԱՆՔԻ ՊԱՅՔԱՐ ----------67
ՀՈՐՁԱՆՈՒՏ----------68
ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ----------74
ՄՏՈՐՈՒՄ ----------75
ԿՅԱՆՔՆ ԱՅՍՈՐ ----------76

ՉԿԱ ----------77
ԹԵ ՈՐ... ----------78
ԴՈՒ ԼՍՈՒ՞Մ ԵՍ ----------79
ՀԱՐԲԱԾ ԵՄ ----------80
ԳԺՎԱԾՆԵՐԻՆ ----------82
ՄԻՆՉ ԿՀԱՍԿԱՆԱՄ ----------83

ԵՐԿՐԻ ՑՆՈՐՔԸ

ԱՓՍՈՍ ----------85
ՀԱՎԱՏԻ ԵՐԿՈՒՆՔ ----------87
ԵՐԿՐԻ ՑՆՈՐՔԸ ----------88
Օ՛, ՇԱՐԺՈՒՄ, ՇԱՐԺՈՒՄ ----------89
ԽԻՆԴ ՈՒ ՏԱԳՆԱՊ ----------91
ՋՐԱՊՏՈՒՑՏ ----------92
ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ ----------93
ԴԵՌ ԿԴԱՏՎԵՆ ----------94
ՄԻ ՊԱՀ----------95
ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ----------96
ԱՍՎԱԾ Է ՔԱՆԶԻ ----------97
ՀԱՅԱՑՔ ԱՆՏԵՍԻ ----------98
ԸՆԾԱՅՈՒՄ ----------101
ՆԱԽԱՆՇԱՆ ----------103

109
Գրական-գեղարվեստական հրատարակություն
Հենրիկ Շմավոնի Օհանյան

ՀԱՎԱՏԻ ԵՐԿՈՒՆՔ
Բանաստեղծություններ

Խմբագիր Ս. Ասլիկյան
Սրբագրիչ Ս. Ասլիկյան
Ե. Ղազարյան

«Պրոգրես» հրատարակչություն
Մոսկվա 2010

Генрих Шмавонович Оганян

АВАТИ ЕРКУНК
Стихи

Редактор С. Асликян
Корректор С. Асликян
Е. Казарян

Издательство «Прогресс»
Москва 2010
Тип. ВТИ Зак. 441